Ա Զ Ա Տ Ա Ն Ց

ԹԱԻԻՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ

1871

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ա. ՈՒ. Ջ. ՏԱՐԻ — 1871 ՀՈԿՏԵՄԲԵՐ 29 — ՈՒՐԲԱԹ — ԸՍՏ Ն. Տ. ՆՈՅԵՄԲԵՐ 10 — ԹԻՒ 32

Արարատն առ այժմ շաբաթը երեք անգամ կ'հրատարակուի։

Բաժանորդութեան գինն է թէ Պօլսոյ և թէ գաւառաց համար 150 թիւ մէկ Օսմանեան ոսկի կանխիկ։

Օտար երկիրներու համար համրուծախքն առնող ին վրայ է։

Մէկ թերթի գինն է 1 դրչ։

Ծանուցմանց տողն առաջին անգամի համար 3 դրչ։ երկրորդ անգամի համար 2 դրչ։ աւելի անգամներու համար մասնաւոր սակարկութիւն կըլլայ։

Նամակք և գրութիւնք պէտք է ղրկել ի վ. խղիր խան գետնայարկ թիւ 40։ առ Տ. Տ. Ղէոնտիրեան. անվճար յանձնուհներ չեն ընդունուիր։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱԻՈՒՐԻ ԿԱՐԾԻՔԸ

ԳԱՀԱՆԱՐՈՑ ԿԱՅՍԵՐ ՎՐԱՑ

Բարիզի ժուռնալը Տեպեշ ծ'օրագիրը անուն մեծաթոռ հրատարակչի դըրքին յետագայ մասը կը գրէ, որուն մէջ Գ. տը Քավուր մեծանուն քաղաքագիտին խիստ հետաքրքրական մէկ դիտողութիւնը կը պարունակի Նաբօլէոն Գ.ի դատաղրութեանց մէջ ունեցած ընդունակութեանց մասին։

Թուրին. Ապրիլ 1861

—Բօի փողոցին կամարակապ ներքև Գ. տը Քավուր պատահեցայ։ Թևէս բռնելով, իր սովորական հարցումն ինձ ուղղեց։

—Լաւ ուրեմն, երբ Թալերան մեզի պիտի գայ։ Լուր մ'ունի՞ք իրմէ։ Ցաւալի է այս, յաւելցուց։ այս երկայն կատակն անհեթեթ և տարօրինակ է։ Իրաւ է որ Ոայնըվալ, Պուրկօան և դուք խիստ լաւ կը ներկայացնէք զՂ Գաղղիա, բայց մեզի պէտք եղածը պաշտօնեայ մ'է։ Հիմա բաւական իմաստուն չե՞մք դեսպանատան գլուխ մը ունենալու համար, Թալերանը կամ ուրիշ մը։

Կը տեսնէ՞ք, սիրելիդ իմ տ'Խարվիյէ, յաւելցուց դլուխ երերցնելով, ձեր կայսրը երբեք չպիտի փոխուի. իր յանցանքը միշտ դաւադրել ուղելն է։ Ատոնք գիտէ, սակայն, թէ դաւադրութեան պէտք ունի։ Բացարձակ տէր չէ։ Ջերոյն նման հզօր տէրութեամբ մը, մեծ բանակաւ մը, և Եւրոպայի հանդարտութեան միջոցին ինչ բանէ երկիւղ կրնայ ունենալ։ Ինչու միշտ, ամեն ժամ իւր միաքն ու խորհուրդը ծածկել կեղծել, յաչ երթալ երբ ի՛ձախն դառնալ կ'ուզէ, և այսպէս հակառակ կերպով։ Ո՛հ, ի՛նչ աքանչելի դաւադիր է նա։

—Բայց, համարձակեցայ պատասխանելու, այս մասին ուրիշ ներող պարտէիք ըլլալ, Պ. Կոմս։ Միթէ դուք ևս երբեմն մեծ դաւադիր մ'եղած չէ՞ք։

—Ե՛ս. ատուդիս, յարեց Պ. տը Քավուր։ Դաւադրեցի։ և կրնայի այն ատեն այլազգ դործել։ Մեք ամենէն զօրաւորներն ու ամենէն թուաւորներն էինք։ Պէտք էր լրջզինքնիս ծածկել Աւստրիայէն մինչդեռ ձեր կայսրը, լոյծ ք զայն, յափտեան անուղղայ պիտի մնայ, ևս զայն կը ճանչեմ ի վաղուց հետէ։ Այս ժամուս կրնար նա ուրիշ և բոլորովին հակառակ պատահիկն հետևելով։ Բայց ո՛չ. նախամեծար կը համարի նա զամենքն մոլորեցնել, ուրիշ հետց հետևիլ տալ, հոսկ ուրեմն դաւաճանել, միշտ դաւաճանել։

Կեցիր, ազատ, ասի իւր յատուկ բըռնատրութիւնն և իւր սիրելի արուեստն է, կը կատարէ զայն ճարտարօրէն, և այս դերին մէջ, միշտ մեր ամենուս առաջինն ու ղօրաւորագոյնն է։

ԳԱՂՂԻԱ ԵՒ ԱՆԳՂԻԱ

Քաղաքագիտական-Ազարանքին մէջ Լորա-Քազաքագետին տուած խնճոյքին առթիւ Վինչեսթրի եպիսկոպոսը հասատց որ Անգղիան ուրիշ ամեն տէրութիւններէ աւելի Գաղղիոյ պարտական է։

Աւելի ճշմարիտ բան մը չկրնար ըլլալ։ Դժբաղդաբար Անգղիա այս ճշմարտութեանը երբէք ուշ չտեսց դնել. անձնասիրութիւնը նորա աչքերը դոցեր էր. հիմակ սկսեր է աւելի յստակ տեսնալ, բայց խիստ ուշ։

Վախնալով որ չըլլայ թէ իր աչխարհի մէջ ունենալ կրցած մէկ հատիկ ըստոյգ դաշնակիցը կորսնցնէ, Անգղիա միութեան պատուիրակին անէ ջնջելի դաշնակցութեամբ մը կապել այն ժողովուրդները որոնք կրնային մեզի օգնութեան դալ որպէս զի իրենց չահերը ազատեն, մերը պաշտպանելով։

Նա (Անգղիա) այն ատեն աղէկ ընտիր և արդար սեպուց մեր վրայ թողտալու Գերմանական հզօրը առանց կարօտութիւն ունենալու իր քսակին լարերը քակելու, և իր նաւերէն ամէն անգամ ծովն իջեցնելու։ Եւ հիմայ, իր ցանածը քաղելու կ'սկսի։ Գաղղիոյ անկումը արդէն ստկալի ծանրութեամբ կ'ծանրանայ Բրիտանիական վաճառականութեան վրայ. Անգղիոյ ձեռնադործութիւնն ալ պիտի զդայ անոր ծանրութիւնը, և գործաւոր դասուց աճող դժգոհութիւնը պիտի ցցուկէ Մեծին— Բրիտանիոյ պետական մարդոց որ ո'րչափի կ'նստի կառավարութեան մը մեծ ժեւ բարեկամ մը, երբ նեղութեան մէջ է, և ոտնակոխ ընել համերաշխութեան սկզբունքը։ Բայց ամենը այս չէ։

Անգղիա իր պահած և ուրիշներու պահել տուած անմիջմտութեամբը զմեզ այսօրուան կացութեան մէջ ձգելով՝ որ և է կերպով Եւրոպայի մէջ ուրիշ դաշնակիցներ բնտռելու հարկին մէջ դըտ.

Եւ ինչ պիտի պատահէր մեր դրացիներուն եթէ մօտակայ օր մը միացընելով մեր չահերը Ռուսիոյ, և խիստ բնական հետևութեամբ մը Միացեալ— Նահանգաց չահուց հետ, պարտաւորէին Եւրոպական Արեւելքի և Ասիոյ մէջ. Ս. Փեթերսպուրկի և Վաշինկթընի արբունեաց դործելու կատարեալ ազատութիւն թողուլ։ Եւ սակայն այս հետևանքները՝ որ կ'բացուին իրենք իրենցմէ այն ամեն քաղաքական մարդոց առջև, որ ապագայի լուծելու միջոցները կը փնտռեն։

(Օք. Նոպէնալ.)

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄԱՐԴԱՍԷՐ ՄԸ

Մ'Թիեպիւր Ի-Նիվերսել լրագիրը Պոնէն Գերմանացի պաշտօնակալի մը գրած մէկ նամակէն հետևեալ քաղուածը կընէ։

«Գաղղիացիք կ'գանդատին Գերմանացւոց ամբոխ բերդաքաղաքները առնելու մասին ի դործ դրած հոդեբանական կերպին համար։ Անոնք դեռ հին աւանդութիւնները կ'փնտռեն, ուրանց համաձայն է թշնամին պէտք բերդին մէկ կողմը վրցնել ու այնպէս պաշարել քաղաքը մտնալ։ Հետևաբար առաջինակ կ'համարին մեր քաղաքները պաշարելով ամբակածութեան սոսկալի մէն քաղաքը անձնատուր ըլլալու ստիպելու կերպը։

«Բայց ինչ պիտի ըսեն եթէ դեռ քննութեան տակ եղող պաշարման նոր դրութիւնը ի դործ դրուի։ Երբ տեսնան մեծ քաղաք մը, իր բնակիչներովը. իր պաշտպանողներովը, իր տուներովը և իր ամրութիւններովը յանկինչ դարաւոր նոր հնարուած վառօդով հնոցներով, որոնց զօրութիւնը այնպէս է որ պաշարողներուն պատուարներուն դիմաց ալ բան մը չպիտի կրնայ դիմանալ։

«Անշուշտ ղմեզ բարբարոսութեամբ պիտի ամբաստանեն. Ահա ինչ բանի մէջ որ քիչ չպիտի սեպին, ինչպէս միւս ամեն ըսածնուն. Իրօք յայտնի չէ՞ որ այդ տեսակ միջոցներ՝ պաշարումներ անհունապէս աւելի հաղուագիւտ պիտի ընեն, և հետևաբար արեան հոսումը պիտի նուազեցնեն,

«Ուրիշ տեսակ դաստէ, ծ ուչէն ե-հասարութիւնը և հեղափոխութիւնը չճանչնալ ըսել է, և մեր պատերազմ ընելու անհուն հետևանաց մէջ, կրնանք ըսել որ մեր հաշուելու խստութիւնը բոլորովին չափաւոր մարդասիրական է, որովհետև նշանակելի և վիճակագրութեամբ ալ հաստատուած է որ քանի որ պատերազմի դիտութիւնը յառաջանայ, արեան հոսումն ալ այնչափ կ'քիչնայ։

Տիեզերական «Թայմս» լրագրին Թըղթակիցը պատճ ժամանակ դարը ու Զըղըհըրլիի պանդխտին այցելութիւն մ'ըրեր, և անոր արդիւնքը չկրնար ուշ ամբաստանեցին ղՀ. ու Պօնապարթի թէ հասարակապետութեան դէմ դաւեր կը նենդէ. իսկոյն երկինք ու գետինք ի վայրութիւն կոչեց թէ իր գիտմանը մաքուր են։ Եւ արդ եթէ փորձառութիւն ըսածնիս թափուր խօսք մը չէ, Զիզըհըրլիի բըռնակալի բայտարութենէն մէջ՝ անպատճառ գաւաճանութեանց սկիզբը տեսնել ենք։

Ծանուցմանց տողն առաջին անգամի համար 3 դրչ։ երկրորդ անգամի համար 2 դրչ։ աւելի անգամներու համար մասնաւոր սակարկութիւն կըլլայ։

Նամակք և գրութիւնք պէտք է ղրկել ի վ. խղիր խան գետնայարկ թիւ 40։ առ Տ. Տ. Ղէոնտիրեան. անվճար յանձնուհներ չեն ընդունուիր։

Տեսնելով որ Ֆրանսայի ազգային ժողովը ամենևին չի մտածեր Փարիզի պաշարման ատեն կրած վնասներուն համար հատուցում մը ընել, Փարիզի քաղաքապետարանը ինքն իրմէ կը ձեռնարկէ այդ գործին։ Ասոր համար ալ ընտրեց յանձնաժողով մը որ ամեն կողմերէ տեղեկութիւններ ժողվելով՝ ամեն վնասներուն գումարը որոշէ։ Այդ յանձնաժողովը ամեն կողմերէ տեղեկութիւններ ժողվելով՝ ամեն վնասներուն գումարը որոշեց։ Ասոնք կը հասնին 2 միլիառ 200 միլիոն ֆրանքի։ Ասոնց մէջ 1 միլիառ 100 միլիոն ֆրանքը տուներու վնասներուն համար է

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԴԱՍԱԿՆԵՐ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՀԱՄԱՐ ՄԱՆԿԱՎԱՐԱՑ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ՀԱՏՈՐ Ա.

ՏՊԱՐԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱՑ

1913

ըրն իւր ընտանեաց քով անցնելու է, ըրը Բէռլէ։

Ք. Հայ զօրագունդը պարտաւոր լինելու չէ Անատոլուի երկիրը թողուլ, և կայսրութեան հեռաւոր կողմերը պահպանելու, կամ պահպանելու, կամ հրահանգուելու երթալ։

Ժ. Պատերազմի ժամանակ մեռնող զինուորաց ընտանիքը մինչև որոշեալ տարին մը թոշակ ընդունելու են տէրութեան գանձէն։

Ա.յս պայմաններուն վրայ կրնան ուրիշներ ալ աւելնալ, որոնցմով զինուորականութիւնն ընդունելի Հայոց համար ոչ թէ ջնասակար կը լինի՝ ինչպես կ'ըսեն ոմանք, այլ առաւել ևս օգտակար և էական։

Բայց թէ Ազգ. Երեսփոխանութիւնն այս աւուր նիստին մէջ պայմաններու վրայ պարտաւոր է՝ վիճաբանութեան մտնելու. մեք պատշաճ չենք դատեր ղայդ. կ'ըսենք, թէ այսօր պէտք է քուէարկուի որ Ազգային ընդհանուր ժողովը քննարկուի եւ որոշուի պայմաններ որոնց ներքև կարելի է որ տէրութեան ղօրք առնելն ալ դրական կողմեր ունենայ։ Այս պայմանները վերջնական ձեւակերպութեան համար կրնայ ենթարկուիլ յանձնաժողովոյ մը քննութեան, որ ետքէն ընդհանուր ժողովոյն ներկայանայ։

Ազգ. ընտրութեան խնդրին համբ կը հրաւիրեմք յարգոյ Երեսփոխան էֆէնտիներն՝ որ գաւառական հարստահարութեանց տեղեկագրոյն մէջ նշանակեալ միւս պարագաներուն վրայ դարձընեն իրենց ուշադրութիւնն և անոնց նպատակը վիճաբանին։

Ա. Ա. Սաքզեան.

ՀԱՑ ԶԻՆՈՒՈՐԱՑ ԽՆԴԻՐԸ

Օսմանեան Պետութեան զինուորութիւնը ցամաքային ու ծովայինի բաժնուած է։ Ցամաքային զօրագունդը որ 1826 ին փոխանակ Ջնջուած Եէնիչէրիներուն՝ Սուլթան Մահմուտ Բ. էն ի գոյ ածուեցաւ և հուսկ Ալեայ ալ Բրուսացի հմուտ զինուորական պաշտօնէից իրատովը կազմուեցաւ, վեց գունդերու (օրտու) կ'ստորաբաժանուի իւրաքանչիւրը գնդին իրեն յատուկ նորընծաները զօրայ նահանգներովը։ Ա. Թիկնապահը՝ որոնց գլխաւոր բանակն է Իսկիւտար։ Բ. կ. Պոլսոյ զօրագունդը՝ գլխաւոր բանակը կ. Պոլիս։ Գ. Բումէլիի գունդը՝ բանակատեղին Մոնաստիր։ Դ. Անատոլուոյ գունդը՝ բանակը ի Խարբերդ։ Ե. Արաբիոյ գունդը՝ որ կ'բանակի ի Դամասկոս, իսկ Զ. Իրագի գունդը ի Պաղտատ։ Իւրաքանչիւր գունդ դարձեալ վեց հրայանակաւոր և չորս հեծելազօրայ դասերու և մի ալ թնդանօթաձիգ դասի բաժնուած է՝ որոնց ամենուն թիւը խաղաղութեան ժամանակին 25,000, իսկ պատերազմի՝ 30,000 անձէ կ'բաղկանայ, որոց դումարն ընդ ամենը 180,000 մարդ ըսել է, և նոյնչափ ալ ճիղդ Բրուսիացւոց Լանդվերի օրինակովը կազմած ու վարժած լեհիճ ըսուած օգնական զօրքերն ալ կան անանկ որ՝ Տաճկաստան պատերազմի առեն կրնայ 360,000 մարդ կանչել զօրակի տակ։ Տաճկաստանի ծովային զօրութեանը գալով պիտի ըսենք թէ Օսմանեան նաւատորմիզը Եւրոպայի միջին տէրութեանց ամենառաջինն է՝ անանկ որ քիչ մը ժամանակ ասկէ առաջ Բրուսիային ալ զօրագ կ'համարուէր իր զրահաւոր և ուրիշ տեսակ պատերազմական նաւուց նկատմամբ։ Բոլոր իր զինուորական նաւերը 20,000 ձիու զօրութենէ շատ ուժ ունին և մինչև 2000 ալ թնդանօթ կ'կրեն՝ որոնց մի քանին խիստ ազդու տեսակներէ են։ Նաւային զինուորաց թիւն ալ 10,900 է կամ անկէ ալ առաւել։

Ա.յս 360,000 են աւելի զօրքը տուողը մինչև այժմ եղեր են Տաճկաստանի մէջ բնակող 34 միլիոն ժողովրդեն 14 միլիոն մահմետականք, Քանդի Օսմանեան հպատակաց 4 միլիոնը Ա.փրիկէ կ'բնակի որ տէրութեան զօրք չատ և որոնք ալ զրեթէ բոլորովին մահմետական են։ Մնացեալ 30 միլիոն ժողովրդեան 14 միլիոնը Բումէլի կ'բնակի, որոնցմէ տասկ մէկ միլիոնը (զարմանալի) Տաճիկ է. իսկ մնացեալքը Յոյն, Սլաւ, Ռումէն, Ալպանացի, Հայ, Հրէայ և այլն, որ այս յիսունհարիւրէն ալ զօրք չառնուիր։ Ասիական Տաճկաստանի մէջ ալ ընդհանրապէս 16 կամ 17 միլիոն ժողովուրդ կ'հաշուին և տասնմէկ 2 միլիոնը Հայ և մէկ. կամ մէկ ու կէս միլիոնի չափ ալ Հրէայ և ուրիշ Կաթոլիկ ազգեր կ'համարուին, անանկ որ հոս 13 միլիոնի չափ Տաճիկ, Արաբ և Քուրդ կ'պանուին։

Վերոյիշեալ թիւերը շատ չորս ցամաք կ'երևան, բայց հաշիւներու տեղեակ անձանց համար կայծակի զօրութիւն ունին։ Նախ և առաջ ամեն վիճակագրութիւն դիտցող անմիջապէս մտերմով կ'հաշուէ թէ 14 միլիոն Տաճիկ ազգը՝ որ ամ ըստ ամէ 150 հազար արու և հայրացու անձինք իրեն մէջէն զինուորութեան կ'խրկէ, անանկ որ՝ ատանք իրենց զաւակ յարուցանելու հասակին զօրանոցներու մէջ կ'անցնին ու միայն ծերացած տասնինի զաւակի տէր կ'ըլլան, տասնկ ազգ մը շատ չուտով պիտի սպառի և կ'սպառի ալ Եւրոպական Տաճկաստանի մէջ՝ ինչպես որ վերը դրած հաշիւէն բացայայտ է և ինչպես ալ մեր յարգի Երեսփոխանաց մին ալ դիտէ թէ Պօսնիոյ մէջ և այն կողմերը շատ պիւղեր աւերակի դարձեր են։ Անոր պատճառը ոչ թէ զօրք առնելն է՝ այլ թէ 14 միլիոն ժողովրդեան տասիւ զինուորականքը մէկ միլիոնէն առնելու դրութիւնն է։

Եւրոպայի լրագիրք, պատմաբանք, ապագէտք և ամեն տեսակ ուսումնականն անձինք՝ որ պատեհութիւն ունեցեր են Տաճկաստանի ներքին վիճակը ճանչնալու, նոյն իսկ Տաճկաց օգտին համար խրատներ են որ ոչ—մահմետականներէն ալ զօրք առնեն որպէս զի իրենք չմնան հետևանաբ, թէ և միւս կողմանէ ալ շատերը դիւանագէտք որ Տաճկաստանի նուաղումը կ'սիրեն, հոս միշտ հակկերը և յայղղեր են համղելու քանի մի տարի պաշտօնեայք՝ իբր թէ այդ դրութիւնը փոխելէն և քրիստոնեայներէն ալ զօրք առնելէն իրենց ձեռս մը ըսպառեր։ Եթէ Տաճկաստանի մէջ տասնկ դաղափարով պաշտօնեայք դտնուին, շատ յաւելի կ'ըլլար։ քանզի այսօր առնուազն Չայն ալ դիտէ որ՝ ոչ այլեն ոչ ձախէն իրեն օգուտ կայ, այլ մկ իրեն կառավարութիւնը հետ բանակցելով արդի նոր սկզբանցը ու տէրութեան ալ ուսած աղաւութեան օրէնքներուն հետևելով կրնայ երջանիկ ըլլալ։

Սակայն կը կրկնենք թէ սխալ և բուլորովին երևակայական է այն երկիւղը որ քանի մը Մեծ. Երեսփոխանք կ'յայտնեն կամ ունին իրրև թէ կառավարութիւնը կրնայ կամ ուզէ Երիսփ. ժողովոյ առաջարկը մերժել։ Մեք բոլորովին համոզուած ենք որ կառավարութեան ամենանոր զեկավարքը ուզիղ լուրջ կ'մտածեն այս մասին քան թէ իրենց նախորդքը, նա մանաւանդ որ՝ հանգամանքը հիմայ շատ տարբեր են։ Գուցէ հին տեսնողը ասանկ մէկ առաջարկ մերժուէը ու ապրին ալ բնաւ յաւ չպատճառէր, քանզի ան տասնինի բաքանչելը ոչ-մահմետական զիտէր թէ Երիսփ. ժողովոյ վիճակին վրայ եղած քանքատանաց դլխաւոր տուիթ իմ հրաժարագրութեան ենթադրելով, նոյնա քրնադատութեան հետ և ինձ հարցումներ կ'ուղղէ. հարցումներ, որոց պատասխանել արժան կը համարիմք. ի միամտութիւնն աղդայնոց։ Թ. Պէկ. էֆենտիմ ի ժողով անդ. չխօսելս, կարծիքս քննադատութիւն են. չըլայտնելս իրեն ապագայ բռնելով. հրաժարագրես անարդար կը գտնէ. այլ իմ համոզումս չէ այն. եսայնպես կը ճանչեմ թէ խօսիլը գործելու նշանաբանն է, Ազգին Մեծ. ժողովոյն կուզումն իսկ այն է կարծեմ։

Երեսփոխանութեան նիստերու մէջ Ազգ. կենսական խնդրոց այնչափ քննութեան և լուծման գործ չտեսի, որչափ լոկ խմաստասիրութիւն, անօգուտ ճարտարիօսութիւն, վիճաբանութեանց վիճաբանութիւն, կարծեաց ձակատումներ նիստէն նիստ մէջ ինչ և թերևս Թ. պէկ. էֆենտիէն աւելի հանճարեղ Անդամակցաց ձայնից անլսելի ըլլալն և երբեմն իսկ խեղդումն յերեսաց խօսողի, վիճող, խմաստասիրելու կոկոզավղող ձայներէ, նիստէ մինչև անդամ խոհուն Երեսփոխանի մը մի քանի անդամք խօսից ծաղրական ժպիտով արհամարհուիլն, Թողում ասել Ս. Նախագահի դունատ դէմքն ու սըրտահատ տեսքն, (անշուշտ Ազգ. կեանց նոյն տուչ և թանկագին ժամերն յոչինչ ծախուելուն ի տնօրէս պատասխող էֆենտիներու) հրաժարագրէս զատ ինչ միջոցի դիմել հարկ եր ինձ։

Ա.րդ՝ եթէ Երեսփոխանի մը չը խօսելն դատապարտութիւն կը հետևի, անօգուտ խօսելէն ինչ. իմ չը խօսելս յատուկ եւակ չարիքն և Թ. պէկ. էֆենտիի պատասխանէն յատուկ եւակ բարիքներն զգօն դատողք Թող զննադատկըզուն, Ա.ը կրկնեմ իմ համոզումս. Ազգն այն մեծ ժողովէն խօսելու հետևի միասին դործ կ'սպասէ, իւր կոչումն է վճռել, դործել, իսկ եթէ լոկ խօսուն և ոչ գործօն մարմին մ'է, եթէ ոմանց կարծեաց և եթ ընդհարման վայր է, եթէ ոմանց նկատման և չահախնդրութեան տեղի է, եթէ ոմանց անձնական կրից առեան է, եթէ դերեր խաղալու սրահ մ'է, եթէ լոկ այո կամ ոչի ձնացած խնդիր մը 17անդամ կրկնաբանութեամբ յեղաշրջելու ժողովատեղի է, եթէ Ազգին նիւթական և բարոյական կեանքն ի գուր վտանգելու ասպարէզ է, յայնժամ իմ չը խօսելս յատուկ եւակ ձնան պիւր դատակնիքը Թող ընդունի. Թող հարցնէ Թ. պէկ. էֆենտի միանգամ իւր ձեռքն ինդրոյ այն ընթացքով ինչ օգուտ քաղեց Ազգն և ասանկով ո՞ր դործ ի յանդ կ'ձլայ, ո՞ր կարծիք, ո՞ր խորհուրդ, ո՞ր քննադատութիւն, տահմանադրութի՞ւն, ծրադի՞ր, կենդրոնայո՞մ, ապակեդրոնացու՞մ, դրութեան խնդի՞ր, դաւառական հարստահարութեանց բարձո՞մ, թէ Հայոց դործոյն Մանդատկէն անցեալ աւուր պարծանօք ցուցած դործերը։ Ոչ պարծանաց, ոչ ամբարատանութեան ոգին կը սիրեմ, դովեստ մուրալու ալ փափաք չունիմ. Թ. Պէկ. էֆ. է պէս, հետի չինեն խօսելու չերմ հաճոյից բրնութիւնն, Իմ փափաքս է Ժողովոյն յօդուտ Ազգի և Եկեղեցւոյ դործելը, այնու ուրախ կ'ըլլամ, անով իմ հրաժարագիրս ալ իւր բնական արժանիքը Թող կորսնցնէ, և ոչ Թ. պէկ էֆենտիի խօսքով կամ տանեպատի նկատողութեան արժանի չտեսնելով, իմ հրաժարագիրս միշտ իւր ձայնն ունի. երբ Ազգ. Երեսփ. ժողովը մի քանիներու

կրից նկատմանց, չհատուցութեան սը-
նապարծութեան գործիք է։ Կը փա-
փագիմ գովութեան արժանի վիճակի
մէջ տեսնել ընա, յօդուտ Ազգի և ի
փառս Հայրենեաց, որուն ծառայ միշտ
տենչանօք։

Հրժր. Ազգ. Երեսփոխան
1871 Հոկ. 11 Մ. Ս. Մելը-բեան.

Ց. Գ.— Ինչ համար տարաձայնու-
թեանց նկատմամբ այսչափ խօսելէ ղինի
պարտ չեմ համարիր վերջաին գրիչ
ձեռք առնուլ իմ վերոգրեալ խօս-
քերուս քննադատութեան ի պատաս-
խանի։ Նոյն.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ
ՐՆՆՈՒԹԵԱՆ
ՑԱՆԶՆԱԺՈՂՈՎՈՑ
(Շ-ր. տե- ՐԻ- 31)

—

Ա.

ԱՐՔՈՒՆԻ ՏՈՒՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԵՂՄԱՆՑ
ԴԷՄ ԴԱՐՄԱՆ

1. Զննութիւն տուոյ վոխարէն մարդ՝
այսինքն ղինուոր տալ, Բարեկարգու-
թեանց հրովարտակին համեմատ, Ա.յս-
պիսի խնդիր մը մենք ինքնին հարկ է
որ ներկայացնենք և ցուցնենք թէ մենք
ալ պատուոյ և քաղաքացիութեան զգա-
ցումն ունինք, և Հայրենեաց ու Տէրու-
թեան համար արիւն թափելէ չենք խոր-
շիր մեր մահմետական հայրենակցաց հետ
Պատճէնները մասին խնդրել՝ որ առնք
չնորհուին, վասն զի Բարեխնամ Կա-
ռավարութիւնն արդէն ղինուորական
տուոյ 14ը զեղչած է և չնորհած է ման-
կանց, զառամելոց և այլոց համար։ Ա.յս
զեղչը փոխանակ Թուահանդէն հաշուելու՝ իր չնորհուած Թուականէն
կը հաշուեն, որով Թահրիրի Թուակա-
նէն մինչև զեղչի Թուականը եղած Պա-
քայէները կը պահանջուին, որ Ժողովուր-
դեան անհնար եղած է վճարել։

2. Ընծէ և Թէդերե-է տուոյ համար նոր
Թահրիր խնդրել, բայց ոչ գաղանի, այլ
հրապարակ. և ապօրէն Թահրիրին պատ-
ճառաւ մնացած Պապայիներուն չնոր-
հումը։

3. Իլընէօժ համար խնդրել որ Տէրու-
թիւնն ուղղակի ինք հաւաքէ։ Միւլթէ-
զիմը միայն իր հաշուոյն տարին՝ կարե-
լի եղածին չափ աւելի տուրք պահանջել
կը նայի, և բնականաբար հողագործու-
թեան ապագային հոգ չտաներ, որ Կա-
ռավարութեան համար կենդանի խնդիր է։

Յանձնաժողովս կը նկատէ թէ արքունի
տուոյ նկատմամբ ժողովրդեան ըրած
գանգատները աւելի ծանր են Միւլթէ-
զիմներուն դէմ. և կրնանք ըսել թէ
այս մասին ժողովուրդը եթէ 100 դրչ.
կը վճարէ, կէսը Թերևս աւելի նուազը
հազիւ կը մտնէ արքունի գանձը։ Ա.յս
կեղեքումներով, հողագործութիւնը՝ որ
երկրին կեանքը պիտի ըլլայ և անոր
դիւրութեանցը և զարգացմանը համար
մինչդեռ այլ և այլ միջոցներ կը պակ-
սին, հողագործութիւնը նոյն իսկ Միւլ-
թէզիմներուն ձեռօք հոգևարք եղած
է. և կ'արժէ որ Բարեխնամ Կառավա-
րութեան մեծ ուշադրութիւնը հայցենք
նեթթական այս մեծ խնդրոյն, այս մայր
արուեստին վրայ, որ միակ արուեստ
մնացած է արևելցւոցս, և բնութիւնն
ալ զայն զարգացնելու միջոցներով օժ-
տած է։

4. Մէնֆէ ամօրէյ անպէլներն ալ արդի
վիճակին մէջ օգտակար չեն կրնար ըլ-
լալ, ընդհակառակն աւելի պիտի ծան-
րանան դիւզացւոց վրայ։ Ա.յս մասին
սրբիչ հնարաւոր միջոցներէ զատ՝ կալ-
ուածոց վրայ փոխատուութեան մնտուկ-
ներ (քրէտի ֆոնսիէ) հաստատելու գրու-
թիւնն ալ հարկաւոր կը նկատուի, որ
մեծ դարման մը կրնայ ըլլալ ելևէի
զնդմանց դէմ։

Բ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԷՒՑ ԶԵՂՄ-
ՄԱՆՑ ԴԷՄ ԴԱՐՄԱՆ

1. Օրէնքի անտեղեակ, կամ տեղեակ
ըլլալով՝ հակառակ գործող պաշտօնէից
զեղծմանց դարման տանիլը միմիայն
Կայսերական Կառավարութեան ձեռնըն-
հատութեանը կը պատկանի։

Ինչ որ ալ ըլլան ձեռք առնուած մի-
ջոցները, որչափ ալ խնամով ըլլան պաշ-
տօնէից ընտրութիւնները. սակայն պէտք
ունին իրենց վրայ հսկողութիւն (ջընթ-
րօլ) մ'ունենալ, որպէս զի տեղացի ժո-
ղովրդեան ընդհանուր տպաւորութենէն և
օրինաց բնաւ անտեղեակ ըլլալէն, և կամ
տեղացի բնիկ մեծատանց ազդեցութե-
նէն օգուտ չը քաղէն։ Եւ երբ դատա-
ական կառավարութիւններէ անկախ
և լիազօր քննիչներ ղրկուին, որոնք ա-
մէն կարգի մարդոց հետ բանակցելու
և գատաւճին իրական վիճակը քննելու
կարող ըլլան, պաշտօնէից վիճակը ան-
շուշտ մեծ փոփոխութիւն կը կրէ։

Սակայն նկատել պէտք է թէ, այս
քննչութիւնն ինչպէս օպոռթ պիտի ըլ-
լայ, վասն զի եթէ տեղական կառավա-
րութեան կանխաւ ազդարարութեան
վրայ՝ ժողովուրդը ելևէնայ իր ցաւերն
անկեղծութեամբ խօսելու. կամ թէ
որ յանձաւոր պաշտօնեայն անմիջապէս
պաշտօնէ չնչու և պաշտելու հոգ չը տարուի,
այն առեն ժողովրդեան վիճակը առա-
ջինէն աւելի վատթար կըլլայ։

Յաւելի հետևանքներ ունին նաև
պաշտօնէից անակնկալ փոփոխութիւն-
ները, որոնք թէ՛ նիւթական և թէ՛ բա-
րոյական աղդեցութիւն ունին ժողո-
վըրդեան վրայ. ասանկ փոփոխութիւն-
ներ երբ երաշտի գանգատի մը վրայ
ըլլան, տարակոյս չկայ թէ օգտակար
կ'ըլլան, բայց ոչ թէ տեղափոխութեամբ
այլ խստաւ պաշտօնէ ղրկմամբ։

2. Թէֆթի՛ դէնէ՛նէ՝ որ հիմնապէս տե-
ղացի բնիկ մեծատանց կը ծառայէ,
այժմեան ընտրողութեան ձևին մէջ բա-
ցարկարգութիւն մտցնելու պէտք կայ.
այս մասին գատաւոր Ա.ռաջնորդաց
ներկայութիւնն իշնչպէս հարկաւոր է,
նոյնպէս կարևոր ըլլալու է մեր Ազգէն
ներկայանալի ընտրելեաց՝ կանխաւ աղ-
գային տեղական ժողովոյն վաւերաց-
եալ ըլլալը. և առանց առաջնորդի կրն-
քոյն աննդունելի պէտք է համարուի
Թէֆթիրք Մէճլիսին Մաղպաթան։

3. Երբ գատաւէ մը եկած գանգատի
մը համար՝ Պատրիարքարանի Թագրի-
րին վրայ Իսթիլամ ըլլայ, և գանգատի
ենթակայ տեղեկական Կառավարութիւ-
նը ինքզինքն արդարացնելու միջոցներ
գործածէ, պէտք է գանգատող Առաջ-
նորդական իշխանութենէն քննել, Կա-
ռավարութեան և Ազգին կողմէն լիա-
զօր քննիչներ ղրկելով, և եթէ հարկ
ըլլայ՝ ի Պոլիս բերել տալով։

Քննել և պատժել, այս երկուքը մեծ
դարման են դատաւորաց վիճակին։

4, Բ. Դէնէն գայած հրամանագրայ
գործադրութեան խնդիրն ուշադրու-
թեան առնուլ, և Վիլայէթի պաշտօ-
նական լրագրայ միջոցաւ հրատարա-
կել ի տեղեկութիւն ժողովրդեան։
Տիւանթուրի թարգմանութիւնն ալ պի-
տոյք մ'է դատաւորաց համար։

5. Շատ հարկաւոր է նաև օրէնքի մը
հաստատութիւնը մահմետականութեան
դարձողներուն, մանաւանդ կնիկ մար-
դոց համար, գոնէ 3 օր իր աղգին յանձ-
նելու մասին։ Ա.յսպէս նաև հարկաւոր
է կրօնափոխ արանց՝ իրենց զաւակաց
նաֆոս մը վճարելու մասին՝ օրէնքի մը
հաստատութիւնը։

6. Զապթիէներուն քնիկ տեղացի ըլ-
լալն ալ իր յոռի արդիւնքներն ունի.
եթէ անոնց տեղ դինուորներ քորձած-
ուին, որոնք տեղափոխութեան ենթա-
կայ են, աւելի օգտակար կ'ըլլան։

7. Տգետ պաշտօնէից կողմէ Հոգևոր-
ական և Բողոքական աղգայնոց նախա-
պատուութիւն մը տալու միտումը բաս-
նալ, և իւրաքանչիւր հպատակ աղգաց
ըստ վարժմի սովորութեան ունեցած
Թէչրիֆաթի կարեը պահել։

Գ.

ՈՉ-ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՑ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒԵԼՈՒԻՆ ԴԱՐՄԱՆ

Կալուածական, առևտրական և ոճ-
րագործական գատերուն ի հարկէ Նի-
զամի առանններուն մէջ տեսնուիլը և
Շէրիի չը յանձնուիլը՝ բարեկարգու-
թեան հաստատութեանը, հարստահա-
րութեանց և չատ տեսակ դրկանոց բարձ-
ման ծառայելէ զատ՝ հաստատութիւնը պե-
տի էլօյնէ, որ արդէն Նիզամով հաս-
տատուած է։

Դ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԴԱՐՄԱՆ

1. Բիւրաեերը և ուրիշ լեռնցի ցեղերը,
որոնց վրայ աւելցան վերջին տարիներս
Չերքէզները, ոչ միայն Հայոց այլ և
ուրիշ աղգայ ալ, և մանաւանդ Կա-
ռավարութեան գանձուն ալ մեծապէս
վնասակար են։ Ա.սոնք զէնք կը կրեն,
կառավարութեան ոչ տուրք կուտան,
ոչ զինուոր, և ապստամբ են. մինչդեռ
միւս ժողովուրդներն անզէն են և կա-
ռավարութեան տուրք և զինուոր կու-
տան, աւելի տուրք մ'ալ այդ ապըս-
տամբներուն տալու պարտաւորութեամբ։

Կառավարութեան կիսնայ կամ քիւր-
տերուն և այլոց ձեռքէն զէնքն առնուլ
և կամ միւս ժողովրդոց ալ չէնք ապ-
սյն առեն երկիրը այս աղետէն կ'ազատի,
վրանաբնակ գաղանները գիւղաբնակ
մարդեր կ'ըլլան։

2. Ա.յն մասնաւոր հարստահարիչները՝
որոնք յաճախ յանդուգնանք պիտի յի-
շատակուին Բ. Դրան մատուցանելի տե-
ղեկագրին մէջ, բառնալ իրենց տեղե-
րէն և ի Բուժիլի աքսորել. առանց այս
միջոցը ձեռք առնելու՝ շատ դժուարին
է նոյն տեղերու Թշուառ ժողովուրդը
ազատել անոնց ազդեցութենէն և ա-
նոնց ձեռք դերի մնալէն։

3. Պարսկաստանի սահմանապուխնե-
րուն վրայ և Բիւրտիստանի գանազան
կողմերը զօրացներ հաստատելու պէտք
կայ։

Շ-բ-ն-ի-ե-ի-ե-ի-ե